

ԼԵՎՈՆ
ՄԵԼԻՔ-ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ

ԱՌՐԲԵՋԱՆԻ
ՌԱԶՄԱԿԱՆ
ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ԼԵՌՆԱՅԻՆ
ՂԱՐԱԲԱՂԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԽԱՂԱՂ
ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ
ԴԵՄ

ԵՐԵՎԱՆ 1998



Լևոն Մելիք-Շահնագարյանը ծնվել է 1958 թ. Գանձակում (Կիրովաբադ): 1974 թ. ապրել է Ուզբեկստանի մայրաքաղաքում, ուր լեզվի և գրականության ֆակուլտետն ավարտելուց հետո, դասախոսել է Տաշքենդի պետական մանկավարժական ինստիտուտի ռուսերենի լեզվաբանության ամբիոնում, 1988 թ. տեղափոխվել է Ղարաբաղ: Աշխատել է որպես Ստեփանակերտի քաղաքովումի բաժնի վարիչ: 1991 թ. ընտրվել է ԼՂԳ զերագույն հորհրդի առաջին գումարման ղեկավարատ: 1992 թ. հունվարից մինչև 1995-97թթ. եղել է ԼՂԳ ԳԽ արտաքին հարաբերությունների համեմատողովի նախագահ և նախագահության անդամ: 1995 թ. աշխատել է իրրև «HK республика» քերքի խմբագիր և «ԼՂ հանրապետություն» քերքի գլխավոր խմբագիր տեղակալ: 1988 թ. (նոյեմբեր-դեկտեմբեր) եղել է Գանձակի ինքնապաշտպանության ղեկավարներից մեկը: Յեղինակ է «Գանձակ-չկորսված աշխարհ» (ռուսերեն) հուշագրական գրքի, որը պատմում է այն օրերին քաղաքում կատարվող իրադարձությունների մասին:

Քաղաքագետ է, տրադիցիոնալիստ, հեղինակ՝ քաղաքագիտական բժնաներով շուրջ 500 հոդվածի:

32(47.924)
Ք-47

99-ա 4

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՀԱՅՈՑ ԾԵՂԱՍԿԱՆՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ-ԻՆՍՏԻՏՈՒՏ

Հիշատակում է անհղթնությունը և հանրապետությանը
Լեզվի և գրականության ֆակուլտետի
Վարչապետ Լեզվաբանության ամբիոնի վարիչ
Լեզվաբանության ամբիոնի վարիչ

1905

**ԱՂԻԲԵԶԱՆԻ ՌԱԶՄԱԿԱՆ
ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԽԱՂԱՂ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԴԵՍ**

**Աշխատությունը հրատարակության է երաշխավորել
ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-
ինստիտուտի գիտական խորհուրդը**

ՄԵԼԻՔ-ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ Լ.

Մ 474 Աղբյուրային դազմական հանցագործությունները
Լեոնային Ղարաբաղի Հանրապետության
խաղաղ բնակչության դեմ

Գլխ. խմբագիր՝ պատմական գիտությունների դոկտոր
Լ. Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆ

Ռուսերենից թարգմանեց՝ Ա. Ս. ՂԱԶԻՇՅԱՆ

Մ _____
703(02)—98

ԳՄԴ 66.3 (2Հ)

© ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, 1998

ՀԵՂԻՆԱԿԻ ԿՈՂՄԻՑ

Այս աշխատանքը ձեռնարկելը դյուրին չի եղել: Առավել ևս այն իրագործելը: Ոչ դյուրին, բայց անհրաժեշտ: Առաջարկությունը բխել է այն ժամանակից, երբ ԼՂՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանից ու վարչապետ Լեոնարդ Պետրոսյանից, որոնք միայն մի պայման էին առաջադրել՝ զրել միայն ճշմարտությունը: Ամբողջ: «Այն պետք է ոչ միայն մեզ, այլ նաև մեր սերունդներին, ողջ մարդկությանը»:

Պարզվեց, որ խնդիրն ավելի զվարին է, քան սկզբում երկվում էր: Յուրաքանչյուր մարդ օժտված է հիսանյի հատկությամբ. ողբերգական իրադարձությունների մասին հիշողությունը բացնող օրգանիզմի պաշտպանական ռեակցիայով: Արցախցիները ևս բացառություն չեն: Մույն աշխատանքը կատարվում էր այն ժամանակ, երբ ԼՂՀ-ում ամբողջ թափով շինարարական ու վերականգնողական աշխատանքներ էին ընթանում, վերացվում էին պատերազմի ու ավերածների հետքերը, երբ Աղբյուրային հետ վեց տարի պատերազմական դրության մեջ գտնված մոզովորդը բնագոյաբար հսկվել էր դեպի ամեն լուսավորն ու տոնականը: Ոչ որ չէր ցանկանում, բեկուզ և մտովի, վերադառնալ ոչ հեռու անցյալի ողբերգական օրերին: Բայց և այդ չանելը սխալ կլիներ: Հիշողությունը հարկավոր է և իբրև դաս՝ ապագայի համար:

Միայն մեկ անհատի հազիվ թե հաջողվեք ինքնուրույն ավարտին հասցնել այս աշխատանքը: Ես երախտապարտ եմ ԼՂՀ-ի կառավարության անդամներին, ԼՂՀ-ի շրջանների ղեկավարներին, վարչությունների աշխատակիցներին, բազմաթիվ գյուղերի ավագներին, ձեռնարկությունների ղեկավարներին, որոնք անգնահատելի օգնություն ցուցաբերեցին այս առաքելությունը ի կատար անելուն: Հատուկ շնորհակալություն եմ հայտնում թողր օգնականներին, և առաջին հերթին՝ Նահրա Միրզայանին, Էվելինա Աղաջանյանին ու Ալվարդ Գրիգորյանին: Երախտագիտությունն եմ հայտնում նաև լուսանկարիչ Ռուսլան

թվականի սեպտեմբերի 15-ին համառ մարտերի գնով գրավելով հարցում ու կոտորելով ավելի քան 30 հազար հայ, թուրքական զորքերը գրաված տարածքներում իշխանությունը հանձնեցին մուսավթականներին (Մուսավաթ՝ կովկասյան թաթարների ազգային կուսակցություն): Դա այլ էթնիկական տարածքներում հիտերոլեցիայի ու տեղաբնիկ ժողովուրդներին բնաջնջելու ճանապարհով Թուրքիայի կողմից թուրքական պետություն ստեղծելու առաջին նախակիրառյալն փորձն էր:

Բարձրից հետո ջարդեր սկսվեցին թուրքական կանոնավոր բանակի գրաված նահանգներում, որոնք առավելագույն արյունալի բնույթ ստացան Օւշիում, Օւսիստում, Գյանջայում և այլ վայրերում: Սակայն Լեռնային Ղարաբաղի մեծ մասում տեղական ուժերին և ամբողջ Ադրբեջանից նահանջող հայկական ինքնապաշտպանության շղկաններին Լեռնային Ղարաբաղի Հայոց Ազգային խորհրդի ղեկավարությամբ հաջողվեց կանգնեցնել զավթիչներին:

Միջազգային հանրությունը, ի դեմս Ազգերի լիգայի, տեղյակ էր Անդրկովկասում տեղի ունեցող իրադարձություններին: Ադրբեջանն իբրև պետություն չճանաչվեց դե-յուրե և չընդունվեց Ազգերի լիգայի անդամ հենց այն պատճառով, որ այդ հանրապետությունում կառավարության չկար, և նա չէր վերանվանում ուղչական տարածքները (ճկատի էր ստնվում Արևելյան Անդրկովկասի հայկական տարածքները):

Ազգերի լիգան Լեռնային Ղարաբաղի հարցը մտցրել է Փարիզի Խաղաղարար կոնֆերանսի օրակարգը, հիմնվելով նաև Լեռնային Ղարաբաղի Հայոց Ազգային խորհրդի և Ադրբեջանի հանրապետության կառավարության միջև 1919 թ. օգոստոսին կնքված ժամանակավոր համաձայնագրի վրա, ըստ որի Լեռնային Ղարաբաղի հարցը պետք է վճռվեր Փարիզի Խաղաղարար կոնֆերանսում: Սակայն միջև կոնֆերանսը, Ազգերի լիգայի կողմից այդպես էլ դե-յուրե չճանաչված Ադրբեջանի հանրապետությունը դադարեց գոյություն ունենալուց, երբ Ռուսաստանը (արդեն խորհրդային) վերադարձավ Անդրկովկաս: 1920 թ. ապրիլին Խորժիր բանակը մտավ հարցը, և Ադրբեջանում հաստատվեց խորհրդային իշխանություն:

Տասնմեկերորդ քանակը առաջանում էր արևելքից արևմուտք՝ Խորհրդային Ադրբեջան հայտարարելով բոլոր «ազատա-

զրված» տարածքները, քանի որ նրա առաջադրարմանը դիմադրություն էին ցույց տալիս դեմոկրատական (բոլժովական) Հայաստանն ու Վրաստանը: Բացի այդ, բոլշևիկյան Ռուսաստանում ավելի մեծ ազդեցություն էր ձեռք բերում հեղափոխությունը դեպի Արևելք արտահանելու համար Ադրբեջանը մեկնակետ դարձնելու գաղափարը:

Արտաքին աշխարհի հետ Ադրբեջանի սահմանները ի հաշիվ Հայաստանի ու Վրաստանի հնարավորին չարի լավի ընդարձակելու՝ Ռուսաստանի ծրագրերը լիովին համընկնում էին քեմալիստների ու մուսավթականների ծրագրերին: Զարմանալի է, որ հաշված օրերում մուսավթականների հիմնական, նախօրյակին հայկական կոտորածներին մասնակցած զանգվածը մոլիսեց բոլշևիկների ջարդերին:

Ռուսաստանը, սակայն, ստեղծված պայմաններում անգամ չէր կարող անուսեւել համաշխարհային հանրության կարծիքը ի դեմս Ազգերի լիգայի, որը չէր ճանաչվ Ադրբեջանի գերիշխանությունը Լեռնային Ղարաբաղի նկատմամբ: Խորհրդային Ռուսաստանը անընթացի չեմթարիկեց Լեռնային Ղարաբաղը հօգուտ Ադրբեջանի:

1920 թ. օգոստոսի 10-ին Խորհրդային Ռուսաստանի և Հայաստանի Հանրապետության միջև կնքվում է համաձայնագիր, ըստ որի «**Խորհրդային զորքերի կողմից վիճելի տարածքների գրավումը չի լուծում այդ տարածքների Հայաստանի Հանրապետությանը կամ Ադրբեջանի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությանը պատկանելու իրավունքի հարցը**»:

Այդպիսով, Լեռնային Ղարաբաղը չի ճանաչվում իբրև արդեն խորհրդայնացած Ադրբեջանի մաս:

Այդ համաձայնագրի քաղաքական ենթատեքստը թափանցիկ է: Խորհրդային Ռուսաստանը չէր ցանկանում զիջել, այսպես կոչված, «վիճելի տարածքները» (ըստ էության անվիճելի հայկական) ոչ խորհրդային Հայաստանին և հարցի լուծումը հետաձգում էր երեցօր սպասվող Հայաստանի բուն խորհրդայնացումը: Դատահական չէ, որ Հայաստանում խորհրդային իշխանություն հաստատման օրն իսկ՝ 30/11 1920 թ., Խորհրդային Ադրբեջանը հայտարարեց հայկական բոլոր տարածքների պահանջներին, այդ թվում՝ Լեռնային Ղարաբաղից հրաժարվելու մասին:

ՀԱՅ ԲՆԱԿԱԳՈՒԹՅԱՆ ԴԻՍԿՐԻՄԻԱՑԻԱՆ ԱԴԻԲԵԶԱՆՈՒՄ

Լեոնային Ղարաբաղի վերաբերյալ ՌԿԿ (բ) Կոլլեկտիվի կենտրոնի պլենումի որոշման իրավաբանորեն չհիմնավորված լինելը ակնհայտ է, սակայն հենց այդ որոշումը հրմբ՝ ծուլասեց Լեոնային Ղարաբաղը Ադրբեջանի կազմի մեջ փաստորեն մրտցանելու համար, որը հնարավորություն ընձևուեց այդ հանրապետությանը՝ շտապ կարգով կոմունիստների գումափոխված ոչ հետապահելու մուսավաթական առաջնորդների սկսել երկարամասի Հայաստանի հետ կապերի խզման և նրա հայ բնակչությանը արձատսախիլ անելու ծրագրված քաղաքականություն: Ավելին, Խորհրդային Ադրբեջանի կառավարությունը քաղաքարված չէր ընդունված որոշումով և, սպասելով մի փոքր ժամանակ, ձեռնարկեց «սրբագրելու» այն՝ ըստ իր հայեցողության: Լեոնային Ղարաբաղի Ինքնավար Մարզ կազմելու վերաբերյալ Ադրբեջանի կենտրոնի 1923 թ. հուլիսի 7-ի դեկրետով¹ անտեսվել Լեոնային Ղարաբաղի քաղաքական, էթնիկական, աշխարհագրական ու վարչական ամբողջականությունը, որի հետևանքով ինքնավար մարզի սահմաններից դուրս մնացին նախկին Ելիզավետպոլի նահանգի մեծ մասը, այդ թվում այն ժամանակ լրիվ հայաբնակ՝ Շամխորի, Դաշքեսանի, Խանլիարի և Շահումյանի շրջանները: Այդ բոլոր շրջանները, հատկապես Խանլիարի շրջանը, այնուհետև կեդրոնիկացին էթնիկական սրբագրման՝ այնտեղ ադրբեջանական բնակչության տոկոսը ավելացնելու նպատակով:

Հետաքրքիր է նշել, որ ինքնավար մարզի կենտրոն դարձավ ոչ թե Շուշին, որ միակ քաղաքն էր ԼՂԽՄ այն ժամանակաշրջանում, հարկառակ ՌԿԿ (բ) Կոլլեկտիվի կենտրոնի պլենումի որոշման, այլ սակավամարդ մի գյուղ՝ Վարաբակն-Խանքենդը, Ստեփանակերտը: Ստեփանակերտի ընտրությունն իրրև վարչական կենտրոնի թյուրովին էլ պատահական չէր: Բաբլում հիմնախի հասկանում էին, որ ժամանակի ընթացքում հայկական ինքնա-

վար մարզի կենտրոնը անխուսափելիորեն կդառնա հայաբնակ թաղաք և աշխատում էին գերծ պահել Շուշին այդ վիճակից, որի հայ բնակչությունն ամբողջովին կտորվել էր 1920 թ. մարտի վերջին տասնամյակում թյուրքական կանոնավոր զորքի ու մուսավաթական զինված ջոկատների համատեղ գործառնակի կողմից: Անա թե ինչպես է նկարագրում Շուշին 1920 թ. մայիսին Կարմիր բանակի հետ քաղաք մտած ականատեսը. «Մենք վկա եղանք սարսափելի տեսարանի. այդ քաղաքի ավերակների ու ջրհորերի մեջ տարրերվող կանանց և երեխաների դիակներ», «հայկական Շուշի քաղաքի խայտառակ ոչնչացում, բռնաբարություն, կտորած, կանանց ու երեխաների ջրհորերն ու անդունդները նևտուն...»²:

Շուշին ադրբեջանաբնակ պահելու անհրաժեշտությունը թե-լադրվում էր նրա աշխարհագրական ու քաղաքական դիրքով. լեոնային բարձրադիր քաղաքը կառուցված էր Լեոնային Ղարաբաղը Հայաստանին կարող ճանապարհի վրա և իրենից ներկայացնում էր լավ ամրացված բնական ամրոց, հզորացված 18-րդ դարի պաշտպանական կառույցներով: Շուշիի այդ յուրահատկությունը կանխորոշել է Ստեփանակերտի՝ իրրև ԼՂԽՄ-ի կենտրոնի ընտրությունը, որովհետև այն տեղադրված է Շուշիի ստորոտում և ուզգամվարական ու մարտավարական առումով մեծապես կախված է Շուշիից: Իսկ Ադրբեջանում քաջ գիտակցում էին, որ Լեոնային Ղարաբաղի բնակչությունը չի կարող հրամայվել ազգային ճնշումից ազատագրվելու փորձերից ու պարտաստվում էին հայ ժողովրդի ապագա, քայց միանգամայն հնարավոր ազգային-ազատագրական պայքարը ճնշելուն: Առավել ևս անխուսափելի պայքար, քանի որ այն մշտապես հրահրվում էր Բաբլում մշակվող ազգային քաղաքականությանը:

Տվյալ աշխատության մեջ խնդիր չի դրվում հետազոտել Ադրբեջանում հայ ժողովրդի հանդեպ տարվող դիսկրիմինացիոն քաղաքականության բոլոր ձևերն ու մեթոդները, այդ պատճառով սահմանափակվել ենք միայն քաղաքականության որոշ արդյունքները թվարկելով:

1926—1973 թթ. ընթացքում Ադրբեջանի գործունեության արդյունքում Լեոնային Ղարաբաղի հայ բնակչությունը ոչ միայն տոկոսային առումով, այլև բացարձակ թվերով անշեղորեն նվազել է այն պարագայում, երբ ադրբեջանական համայնքը մշտա-

պես մեծացել է: Լեոնային Ղարաբաղի ժողովրդագրական պատկերը (ինքնավարության սահմաններում) փոխվել է հետևյալ կերպ¹²:

	1926 թ.	1939 թ.	1959 թ.	1970 թ.	1979 թ.
Ողջ բնակչությունը	125,3	150,8	130,4	150,3	162,2
Այդ թվում.					
հայեր	111,7	132,8	110,1	121,1	123,1
աղբյուրացիներ	12,6	14,1	18,0	27,3	37,2
այլք	1,0	3,9	2,3	2,0	1,9

1913 թ. Լեոնային Ղարաբաղում (ինքնավար մարզի սահմաններում) ապրում էր 176 հազար մարդ, այդ թվում 164 հազար հայ: Բնակչության կորույթ նվազումը 1913—1926 թթ. (28,8) տեղի է ունեցել ի հաշիվ հայկական կոտորածների: Սակայն սակավին 1923 թ. մարզի 157,8 հազար բնակչության թվում հայերը կազմում էին 94,4%՝ 148,0 հազար¹⁴:

Ինչպես վերև արդեն նշվեց, Աղբյուրացի «գերիշխանության ներքո» Նախիջևանի Ինքնավար Հանրապետությունում ընթացիկ հարյուրամյակի վարտմանակ թվականներին փաստորեն հայ չմնաց: Այնտեղ իսկ զանգվածաբար, պետական մակարդակով ոչնչացվեցին երկրամասի էթնիկական պատկանելիությունը անհերքելիորեն վկայող հարյուր հազարավոր ճարտարապետական հուշարձաններ:

Դիակրիմեացիոն քաղաքականություն էր գործադրվում նաև այն հայկական շրջաններում, որոնք չէին մտնում ԱԴԽ-ի կազմի մեջ: Բարձր իշխանությունների սևեռում ուշադրությունն էր «արժանանում» Խանդարի շրջանը, որը կապող օղակ էր Լեոնային Ղարաբաղի և Հայաստանի միջև: Աղբյուրացի կազմավորման պարին հիրավի հարյուր տոկոսանոց հայ բնակչություն ունեցող շրջանին սկզբում միացվեց աղբյուրացիների Դաստափյուրի շրջանի մի մասը, այնուհետև, 1971 թ. ամբողջ Մաֆարախիի շրջանը: Հատկանշական է, որ Մաֆարախիի շրջանը Խանդարի

շրջանի մեռ նույնիսկ ընդհանուր սահման չունեք: Այս երկու կրտսերների մեջ Խանդարի շրջանից հանվեց ու հարևան Դաստափյուրի շրջանի կազմի մեջ մտցվեց հասանց հայկական խոշոր բնակավայրը՝ հարակից ոչ մեծ հայկական գյուղերով: Նման հեռուտու քաղաքականությունը հանգեցրեց նրան, որ շրջանի բոլոր ղեկավար աշակերտները գտնվեցին աղբյուրացիները: Իր միջոցին, Բարձր կոմից իրախուսվող նորամուտ ղեկավարների գործունեությունը հանգեցրեց շրջանի հայ բնակչության կորույթ նվազմանը: Հնամենի հայկական Բրաջուր գյուղի (Բարձրի 26 կոմսարների անվ. կոլտնտեսություն) բնակիչները արդեն 1985 թ. ստիպված էին զանգվածաբար թողնել գյուղը և տեղափոխվել Խորհրդային Հայաստան:

Անուշադրության շնամակեցին նաև Աղբյուրացի վարչական ենթակայության ներքո հայտնված մյուս բնիկ հայկական շրջանները: Բավական է հիշատակել ավերված հուշարձանի մասին, որը կանգնեցվել էր Դաստափյուրի շրջանի համանց գյուղի բնակիչների կողմից, ժողովրդական միջոցներով, ի հիշատակ Հայրենական պատերազմի ռազմաճակատներում զոհված հայրենակիցների: Հուշարձանի բացումը պետք է տեղի ունենար 1969 թ. հուլիսի 28-ին, բայց այդ իրադարձությունից երկու օր առաջ, ուշ գիշերին, աղբյուրացիները անձամբ կոմունիստական կուսակցության շրջկոմի առաջին քարտուղար Մուլեյանովի գլխավորությամբ, նահապետ սեչանտովով գյուղի էլեկտրակայանությունը, րույզողների օգնությամբ հուշարձանը նետեցին կիսրը: Գյուղացիների մեղքն այն էր, որ հուշարձանն ստեղծվել էր հայկական ժողովրդական արվեստի մոտիվներով: «Մա Աղբյուրացի է, և այստեղ հայկական ոչինչ չի կարող»¹⁵. — հայտարարեց կուսակցական բարձրաստիճան գործիչը: Ախրավրված էին գյուղի աշխատավորների անհնամիտական զգացմունքները, զոհված համագյուղացիների մասին: Որանց հիշողությունն ու ազգային արժանապատվությունը: Միջադեպն ավարտվեց միայն մեկ՝ օգոստոս ամսում հանանցից 120 հայ ընտանիքների արտագաղթով: Սուլեյանովին նույնպես «պատմեցին» փոխադրեցին Աղբյուրացի մայրաքաղաք՝ այլ ղեկավար պաշտոնի: 1987 թ. հուլիս-դեկտեմբեր ամիսների ընթացքում կոմկուսի Շամիրի շրջկոմի քարտուղար Ասադովը, օգտվելով Աղբյուրացի կուսակցական ղեկավարության բացանապա աջակցությունից, վարում էր երկու մարշալ-

ների նայրենիք Չարդախու գյուղի բնիկ մայրենականը արմատախիղ անելու քաղաքականություն: Հուսամաս բնակիչները 18 հոգաճանց պատվիրակություն են ուղարկում Մոսկվա: Պատվիրակությանն ընդունեցին՝ միտքենալով շատ առայնապես, բայց Մոսկվայի միջատությունն ավարտվեց հողորդարճույթ հեռախոսագանգերով Ադրբեջան: Սակայն դեկտեմբերի 1-ին, մարշալ Հ. Բաղդամյանի 90-ամյակի տոնակատարության նախօրյակին, Ասադովը հարեան քաղաքներից հավաքած միլիցիաներին մի անձ շոկատով (150—200 մարդ) գործի դնելով միլիցիայի ու հրշեջ մեքենաներ, ներխուժում է Չարդախու, և սնվում է գյուղացիների ջարդը: Ընդ որում, Չարդախուի մի քանի տասնյակ բնակիչներ կարճատևորում են «Ժխտանքության ներկայացուցիչներին դիմադրություն ցույց տալու համար»¹⁶:

Զի կարելի անէ, թե Ադրբեջանի մայրենականը անմտունջ տանում էր համարապետության իշխանությունների դիկտիրմիանցիոն քաղաքականությունը: Բողոքներ հնչեցին արդեն 1921 թ. հուլիսից, Լեոնային Ղարաբաղը Ադրբեջանին հանձնելու որոշումից անմիջապես նետա: Ադրբեջանի ԿԿ Կենտկոմը բազմիցս քննելու քննարկել է տվյալ բողոքները¹⁷ ու ամեն անգամ ԸԿԿ (ր) Կոպյուրայի որոշման հետ չհամաձայնվողների նկատմամբ բռնամիջոցներ կիրառել, ընդհուպ մինչև կոմունիստական կուսակցության առանձին կազմակերպությունների ցրումը:

Յ0-ական թվականներին ԼՂԿՄ-ում՝ զանգվածային բռնություններ են սկսվում: Էթն սոսակցյան անարեկչության տարիներին ԽՍՀՄ-ում մարդկանց ճամբար էին բշում հակառակախոսության մեջ ու խնկրիխոսական երկրների համագործակցելու մեղադրանքով, ապա Լեոնային Ղարաբաղի ողջ՝ ղեկավարությունը բռնադատվեց փաստորեն ազգայնականության մեղադրանքով (կոմկուսի մարզկոմի առաջին քարտուղի Պողոտովը, մարզպահ գոյժմալիք կոմիտեի նախագահ Բաղդամյանը, հողային գործերի ժողկոմ Արզանյանը, կոմկուսի բոլոր շրջանային կոմիտեների առաջին քարտուղաները, շրջգործկոմների նախագահները):

1947—49 թթ. ադրբեջանական իշխանությունները Ստեփանակերտի ոստցջակված ինստիտուտի ղեկավարությանը մեղադրեցին Լեոնային Ղարաբաղը Հայաստանին միացնելու ձգտման մեջ: Ըստ դատախոսներ դատուպարտվեցին: իսկ ինստիտուտի անօրեն Սաֆարյանը հասցվեց ինքնապստոյան:

1945 թ. Լեոնային Ղարաբաղի բնակչության խնդրանքով Հայաստանի ԿԿ ԿԿ առաջին քարտուղար Արտախնուը միջնորդությանը դիմել է Սոսիլինին, խնդրելով նրա աշակցությունը ինքնուճար մարզը-Հայաստանին վերամիավորելու հարցում, բայց այն պիպսն էլ մնաց չլուծված¹⁸:

Համուն Հայաստանին վերամիավորվելու Լեոնային Ղարաբաղի բնակչոթյան մեջ Ֆիրալի զանգվածային շարժում ծավալվեց 1959—62 թթ.: Եարժման մի շարք ղեկավարներ բանտարկվեցին ու բռնադատվեցին, իսկ կոմունիստական կուսակցության մարզպահ կոմիտեի առաջին և երկրորդ քարտուղաները ազատվեցին աշխատանքից ու արտարավեցին Հայաստան¹⁹:

1965 թ. հուլիսին ԽՄԿԿ ԿԿ Լեոնային Ղարաբաղից Հայաստանին վերամիավորվելու խնդրանքով 45 հազար ստորագրությանը նամակ է ուղարկվում:

1965 թ. Լեոնային Ղարաբաղի մի խումբ մտավորականներ նամակով դիմում են ԽՄԿԿ ԿԿ խնդրելով քննարկել մարզը Խորհրդային Հայաստանին վերամիավորելու հարցը²⁰: Ադրբեջանի ԿԿ մարզպահն բյուրոն դատուպարտում է նրանց. «ԼՂԿՄ Հայկական ԽՍՀ միավորելու սխալ առաջարկությանը ԽՄԿԿ ԿԿ հասցնագրված խմբակային նամակ կազմակերպելու համար, որը վնաս է պատճառում աշխատավորությանը Լեոնային բարեկամության ոգով ԽՍՀՄ ժողովուրդներին դաստիարակելուն»²¹:

Նամակը ստորագրողները բոլորը հետացվեցին աշխատանքից, շատերը ենթարկվեցին քրեական պատուխանաւատվության, մեծ մասը Լեոնային Ղարաբաղից բռնազտրեց Հայաստան:

1966 թ. օգոստոսի 13-ին ԽՄԿԿ ԿԿ հանձնարարեց Հայաստանի ու Ադրբեջանի ԿԿ ԿԿ, ինչպես և այլ հանրապետությունների կուսակարություններին համառոտել նախարարուստել Լեոնային Ղարաբաղի կարգավիճակի հարցը: Սակայն Ադրբեջանի ղեկավարությունը հեթոթական անգամ շրջափակեց այդ հարցի լուծումը:

Լեոնային Ղարաբաղը Հայաստանին վերամիավորելու վերաբերյալ բազմաթիվ առաջարկություններ մնացվեցին ԽՍՀՄ Նոր Ամսմանադրության նախագծի քննարկման ժամանակ 1977 թ.: Այլ կարակցությունը ԽՍՀՄ Միեմիտոսների խորհրդի նիստի ժամանակ նշվել է. «Մի շարք քաղաքական հանգամանքների հետևանքով մի քանի տասնամյակներ առաջ Լեոնային Ղարաբաղը

Պետականության կրողի կարգավիճակը արտահայտվում էր ազնվախի «մանրոքներում», ինչպիսին կրթավարձից ազատվելը (հայտնի է, որ ազգային փոքրամասնությունները Ադրբեջանում հարկադրված էին վճարել բարձրագույն կամ մասնագիտական միջնակարգ կրթություն ստանալու համար):

Ադրբեջանի պետական գործիչների փորձերը հանրապետության հայ բնակչությանը ներկայացնել իրեն ազգային փոքրամասնություն, կատարելապես անմիճ են: Հայերը կանգնած են եղել ադրբեջանական պետականության կազմավորման ակունքներում, թեև հանուն անաչտոտության պետք է խստովաճել, որ դա արել են ոչ հոծար կամրով, քանի որ մշտապես ու եռանդուն կերպով դիմակայել են «հասնաշարհային հեղափոխության» շահերից բխող հայկական բնիկ հողերը Հայաստանից օտարերու Մոսկվայի քաղաքականությանը:

ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ ՇՈՒԲՁԸ

Ստեփանակերտի և Բարվի միջև առկա հակամարտությունը բնորոշող նման ձևակերպումը բոլորովին էլ պատահական չէ, քանի որ Մոսկվան ի վիճակի չէր լայն մատարակությունից քուղարկելու Ադրբեջանական ԽՍՀ կազմավորման վերը նշված հանգամանքները: Ըստ էության Մոսկվան երբեք էլ չի ժխտել, որ Ադրբեջանի հայ բնակչությունը այդ խորհրդային հանրապետության պետականության կրողն է: «Ղարաքաղի խնդիրը՝ դարաբաղցիների խնդիրը չէ, այլ Ադրբեջանի ողջ հայ բնակչության»²⁵,— հայտարարել է Մ. Գորբաչովը:

Խորհրդային մամուլում էր «Լեռնային Ղարաքաղում և նրա շուրջը» խորագրի ներքո: «Նրա շուրջը» դա Ադրբեջանն է, որտեղ սովաբարձիվ հայ բնակչություն էր ապրում հնուց ի վեր իրեն պատկանող բնիկ հողերի վրա: Այդ է պատճառը, որ օրինակաբար է թվում ԽՄԿԿ ԿԿ և ԽՍՀՄ Միմիստրների խորհրդի «Ադրբեջանական ԽՍՀ Լեռնային Ղարաքաղի Ինքնավար Մարզի սոցիալ-տնտեսական զարգացումը արագացնելու միջոցների մա-

սին»²⁶ որոշումը, ըստ որի նախատեսվում էր բարեփոխական միջոցառումներ անցկացնել հոծ հայ բնակչությանը շրջաններում, փաստորեն Ադրբեջանի ողջ տարածքում: Մասնավորապես նախատեսվում էր վերակազմակերպել ու վերակազմակերպել բարձր պետական քառաբունի աշխատանքները:

1988 թ. փետրվարի 20-ին ժողովրդական դեպուտատների ԼՂԿԿ 20-րդ գումարման խորհրդի արտահերթ նստաշրջանը որոշում քննուկնեց խնդրել Ադրբեջանի ու Հայաստանի Գերագույն խորհուրդներին «լուծել ԼՂԿԿ-ը Ադրբեջանական ԽՍՀ-ի կազմից հայկական ԽՍՀ-ի կազմ հանձնելու հարցը, միաժամանակ միջնորդել ԽՍՀՄ Գերագույն խորհրդի առջև՝ ԼՂԿԿ-ը Ադրբեջանական ԽՍՀ-ի կազմից Հայկական ԽՍՀ-ի կազմ հանձնելու հարցի դրական լուծմանը»²⁷: Այդ օրը սկիզբ դրվեց ԽՍՀՄ-ում առաջին ներքին պետական-իրավական վեճին՝ միութենական հանրապետության ու ինքնավար մարզի միջև: Սակայն Ադրբեջանում այդ վեճն ընկալվեց իրեն հակամարտություն հանրապետության և մանրապետությունում ապրող հայ բնակչության միջև, և դա հերթական անգամ հաստատում է, որ այդ հանրապետությունում հայերը նրա պետականության կրողներն են: Լեռնային Ղարաքաղի պատգամավորների քաղաքական խնդրանքին Ադրբեջանում արձևագրեցին միանգամայն «հասնապատասխան» փետրվարի 26—29 հայ բնակչության ջարդեր սարքելով Բարձրին մոտակա, ԼՂԿԿ-ից շուրջ 400 կմ հեռու գտնվող խոշոր արդյունաբերական քաղաք Սունգայիթում:

ՀԱՅԵՐԻ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՍՈՒՄԳԱՅԻԹՈՒՄ

Սունգայիթում մոլեգամ արդյունահեղ ողբերգության մեջ կենտրոնացվել են մարդկային բոլոր հնարավոր հանցագործություններն ու տատապանքները: Ապշեցնում են ջարդի չափն ու անպատճելիությունը, գործադրման լիտիությունն ու դաժանությունը²⁸: Սունգայիթյան ցեղասպանությունը ընդունված է համարել պաշտոնական Ադրբեջանի արձագանքը հայ բնակչության ընդգծված խաղաղ ու ձևով ժողովրդավարական կամրի արտա-

նարտոթյանը՝ Լեոնային Ղարաբաղի Ինքնավար Մարզը Հայաստանին վերամիավորելու մասին: Հանցագործության նպատակն էր շրջափակել խնդրի ննարավոր լուծումը, անարեկել հայերին նոր արյունահեղ գործողությունների նեանակարով և հարկադրել նրանց հրաժարվելու հանուն Ղարաբաղի ազգային-ազատագրական պայքարից:

Խոշոր արդյունաբերական թաղաքի ողջ տարածքը դարձավ հայ բնակչության զանգվածային ու անարգել ջարդերի հրատարակ: Տեղաապումնայն արդյունքների գարնարելի էին. տասնյակ սպանվածներ, որոնց մեծ մասը ողջ-ողջ հրկիզվել էին խոշտանգումներից ու կտտանքներից հետո, հարյուրավոր վիրավորներ, որոնցից շատերը դարձան հաշմանդամներ, թագմաթիվ բռնադատվածներ, քրոնց մեջ մեծ թվով անչափահասներ կային, 18 հազար փախուսականներ, ալիլի բան 200 ավերված ու թալանված բնակարան, տասնյակ կողոպուտված կրպակներ, խամոթներ, արխեստանոցներ ու հատարակված նշանկություն օրյակներ, տասնյակ այրված ու ջարդված մեքենաներ: «Մտադիլյան զազանություններից հետո,— գրել են մուսուլյան գիտնականներ,— մեր երկրում չի կատարվել ոչինչ, որը մեզ շարտեր ևս պղծան հետո՝ քաղաքակրթությանից դեպի վայրենություն»²⁰:

Սիպլ կիկներ համարել, թե հայերի ցեղապանությունը Մուսուլյանում տեղի է ունեցել տարերսմորեն, այն կազմակերպվել է հանգամանորեն, այդ թվում և՛ գաղափարական, և՛ հոգեբանական տեսակետներից: Նախ և անաջ խոսքը վերաբերում է սուսգայրիյան «հանքահավաքների»՝ սկտարվարի 26-ին թաղաքի կենտրոնում սկսված հակահայկական խտրամոդոլմների: Այդ «հանքահավաքներին» գալիս էին ձեռնարկությունների, նատատությունների դեկավարների հրահանգներով, դրանցում իրեն հետադրեր ելույթ էին ունենում ոչ միայն դարաբարյան գործերին «իբրզիկները», այլև թաղաքի դեկավարները²⁰:

Փետրվարի 27-ի «հանքահավաքները» վերափոխվեցին լուսնի գերնդությունների: Առաջին ձեռնարկ ու ջարդերը տեղեցին մինչև ուշ գիշեր, իսկ հաջորդ օրը ջարդերին մասնակից հարյուրավոր մարդիկ կրկին հավաքվեցին կենտրոնական հրապարակում: Կա երկան պահ է, ջարդարարները վերջնականապես համոզվեցին իրենց անպատվելիություն մեջ, այդ վերջին խտրամոդոլումն ան-

իթի մտ էր քաղաքի ու իրավապահ մարմինների դեկավարությունը: Հանքահավաքը ավարտվեց նրանով, որ կոմունիստական կուսակցության Մուսուլյանի թաղկոմի առաջին քարտուղար Մուսուլյանին Արքեպանի պետական դոշը ձեռքը վերցնելով՝ տարավ իր ետևից անվճար սպիրտայինով ու թիրաղելիով արքած անթիլին: Մուսուլյանին մի՛ լանքի՛ հարյուր մետր հետևելով, անթիլը բաժան-բաժան կլանվ, շարունակելով անցած օրվա վակ-հանալիան, խմեր կազմելով ոչ-մարդ արարածները սկսեցին մարմակվել հայկական բնակավայրերի վրա՝:

* ՎԿԱՅՈՒՄ ԵՆ ԱՎԱՆԱՏԵՍՆԵՐԸ

Պատմիկյան Վիտայի Նիկոլայի, Կոնստանդինով 1972 թ., քննակի Լ. Կոնստանդինովի և Մուսուլյանի, 3 միլիոնը, տուն 4/2, քն. 25:

«Մեզ դուրս բերին թակ, թողք հարեանները պատշաճներում կանգնած սպասում էին, թե ինչ է լինելու արևմտաև Ամրիկո շրջապտոց մեզ: Սիրում էին հարգածեցին, ես կորցրի գիտակցություն, հոր ուշի կեա, ինձ հորից մեկեցին, ես հաճախ էի գիտակցություն կորցնում... Մեռողներն ևս շատն ու լանցի, որովհետև առաջին հարգածները ինձ հասան, ես կորցրի գիտակցություն երբ ուշի կեա, փորձեցի նրանց բարձրացնել, նրանք պատված էին իմ կորցրել Արքին անթիլը չկար, միայն պատշաճորից մարդիկ էին հայտն: Ել գիցք Փորձեցի բարձրացնել նրանց, չկարողացա, նախ մեռա կտարված էր... Մեռողներն մարմինները դեռ տար էին»:

Մուսուլյան Իրինա Բարիկինի,

ձեռնարկ 1963 թ., քննակի Լ՝

Մուսուլյանի, 41 Ա. թաղապետ, տուն 1 գ, քն. 20:

«Հանգամարեցի միլիցիա: Ռուսներն առում են, ձ՛՛՛Ա քաղապետում հար-նակվում են, սպանում: Պատասխանում են. «Սիպանք, հիմա կգանք: Տուր թուկից հետո ևս հորից զանգամարեցի ու այս անգամ ապրեցաներն են առում: Իսկ նրանք. «Ի՛նչ: Գուր սենց նոր զանգամարեցիք: Առում են. «Իսկ ինչո՞ւ չեք գալիս: Նորից առում են. «Հիմա կգանք: Մի խոսքով, ես էի մի կերպ անգամ զանգամարեցի, նրանք առաջին. «Գուր սեղ արդեն ձանձրացրիք, էլ չգամարարեք: Ես մի անգամ էլ զանգամարեցի, բայց լսածուց արքին ոչ ոք չեք վերցնում: Անցա ևս միլիցիան ոչ միայն չեք ստանում, այ կողքով էլ չեք անցնում, որովհետ գրեթե զրեցիցից նրանք: Նախ և անաջ սկեստրիս մեկնաց-րին, 52-ամյա տարից կնոջը, մերկացրին ու թաշ տվին նրերն, թաշ տվին,

իջեցրին նկուղի մտա, մտաբան ծեծեցին, ծեծեցին քրան, գցեցին, նա պատկած էր արդև մերձհամա, նրանք կարծում են՝ մտնել է արդևն: Իսկ 12—13 տարեկան լաճուկները վերցնում են փայտերը ու սկսում ծեծել, ծեծում, ծեծում են... Մեծում են, հետո հետում նկուղ: Եղիկին՝ ամուսնու, ծեծում են փայտերով, բաներով: Նրանք կացիններ ունեին, հատուկ, ինչ-որ պատվիրված բաներ, ինչ-որ դանակներ, բրանց անեն ինչը ինքնաշեն էր, պատվիրված: Նրան այդ էին այնպես, որ հետո ամենքս էր անառաչել: Իրային այրեցին: Նրան էլ մերկացրին... Նրան էլ ողջ-ողջ նրկեցին: Նրան մերկացրել են, վրան բեճեցին ցրտի ու վառելի էլեկտրական մտա... Սկեսարայի գլան մեր տան հետևը: Իզոթը պատկած էր բակում, բայց Եղիկից ու Իրայից հետո: Անորոշովին ծեծված, ոտքերը կիսով չարի այրված, երեսը պատած այրվածիքի սպիներով, երևում է, դաղել էին զլանակներով: Քեռի Միշային վաճել էին դեպի Գանապահ... Եվ անա այդ ամբողջ ամբողջ, բոլոր մարդիկ, հարևանները վազել են և հեռու: Նրան: Նրա վրա թաքեր են հեռել, իսկ նա հետել է ու ձեռքերով ծածկվել: որ գլխին չդիպչի: Իսկ նրանք շատվոր էին, մտն են վազել, մեկը բան է ունեցել ոչ սովորական, ոչ թե կորսացրած, այլ ինչ-որ բնույթով, սրած: Եվ անա նա այդ բանով՝ նրա գլխին: Քեռի Միշային էլ ողջ-ողջ այրեցին: Բնակարանում մնացին չոր հոգի, վեցին սպանեցին: Փրկվեց միայն Մարինան, քեռի Միշայի ու Ժամենայի դուստրը:

Պետրոսյան Մարինա Միքայելի,

1962 թ. ծնված, քնակվել է՝

Սումգայիթ, 4 թաղամաս, տուն 24ա, քն. 2:

«Աղջկան, որ հյուր էր եկել, բռնաբարել էին, դամազը խթել էին վիրավորելով երկեամները, կրունկները կտրել էին, օդեքն ակնաքնները պոկել էին մտի հետ միասին: Հոր աչքի առաջ բռնաբարում են: Իսկ ընդ շապանցից, ասացին. «Այդ նրան բավական է»: Այն, ինչ արեցին նրա աղջկա հետ, իբր այդ էլ նրան ներքի է, թող այդպես տանջվի: Այդ աղջկան էլ մտքիցն ավտորտա: Ես նրան ասում եմ՝ հասիր: Նա ասում է՝ ես հասել չեմ կարողանում: Նրա կրունկները տաշած էին, նա կանգնած էր ոտից թաթերի վրա, այրումը ծորում էր...»:

Բնկյան Բարսեմ Հակոբի,

1935 թ. ծնված, քնակվել է՝

Սումգայիթ, Միր փողոցում, տուն 5/7, քն. 8:

«Ես հայեցի՝ այնպիսի մեքենա էր, բայց արդեն չես հասկանա «Թիզուլի» կամ ինչ: Եվ ներսում հինգ մարդ, սե-սե, այրված... Հավանաբար բնույթով զանազան են փախչել: Նրանց ինչ-որ տեղ բռնել են ու վառել: Ես դա իմ աչքերով եմ տեսել: Մերեքնան բացարձակապես սե էր... ոչ համարներ, ոչ ապակիներ, ոչ անվճար՝ ոչինչ չկար... Ես չգիտեմ, ինչպես էր այդտեղ հայտնվել մեքենան... Եվ հինգ դիակներ... Նրանց բոլոր ոտերիները երևում էին... Գանգերն էին երևում»:

Սումգայիթի մի բանի հազար չարդարարներից պատասխանատվության ենթարկվեցին միայն 94 մարդ: Նրանց ներկայացվում էր պատմությունների, բռնաբարությունների, չարդերի ու այլ մեղադրանքներ, ընդ որում, առանց բացատրության, բոլոր դեպքերում հանցագործության հիմնավորումը անվանվել է «խուլիզանական դրոշմատուճակներ»: Մնացին անպատիժ հաս թաղաքային ու իրավապահ մարտինների գործիչները, թեև ակնհաստեսներին շատերը մատնացույց էին անում «հանրահավաքների» և գործողությունների անմիջական մասնակից շատ անձնավորությունների: Ավելին, Սումգայիթի դատախազ Գախրովը թաղաքում հայերի ցեղասպանության տարին շրջադրած, ուր նա իրավական կարգովանոցի վրա հակողություն էր իրականացնում, նշանակվում է... Ադրբեջանի գլխավոր դատախազ: Միայն Սումգայիթի կուսակցական առաջնորդ Մուսիխադին հեռացվեց իր պաշտոնից, թեև նա էլ դատական պատասխանատվության չենթարկվեց: Գուցև այն պատճառով, որ Ադրբեջանի ԿԿ ԿԿ առաջիկա պլենումում քաջատեղյակ Մուսիխադին պետության դեկլարությունն ուղղակի մեղադրեց կոտորածը կազմակերպելու մեջ³¹:

Ադրբեջանի այն ժամանակվա նախագահ Ա. Մուրադխովը հետևյալ կերպ է բացատրում իրարարությունները. «...հանցաբարությունը չէր մտնում արդյունառ ցեղասպանության հեղինակների ծրագրերի մեջ, որը հայտնի էր մի շարք պայմանական անվանումներով, որոնց մեջ առայժմ ուժի մեջ էր Կապաքար հանուն Արցախի ինքնորոշման»: Անհրաժեշտ էր... լայնածավալ արյունահեղություն: Եվ շուտով ազգայնականների դիվական պլանը գործի դրվեց: Կապանի (և այլ շրջանների) ադրբեջանցիների մեջ սկսեցին հմտորեն խուճապ սերմանել: Մահվան սպառնալիքով դրդել նրանց թողնել Հայաստանը: Գա 1988 թ. մայիսին էր: Իսկ նույն թվականի նոյեմբերին արդեն այնտեղ ոչ մի ադրբեջանցի չէր մնացել: Հանրապետությունն այդ օրերին ակեղծվում էր: Արդեն քցեց էին արձակում ընդհարումների առաջին խարույկները... Գլխաչայում, Բաբվում հաջողվեց մարդ հակամարտությունը: Բայց չհաջողվեց կանգնեցնել Սումգայիթը: Պատահեց այն, ինչ պետք է պատահեր³²:

Որքան համեստ է Ա. Մուրադխովը խոսում Սումգայիթի մասին, որքան նիզվիտորեն է շրջանցում «կոտորած, ցեղասպանու-

թյուն, շարք» բառերը, պատմադարձակաբանական անհասանելի միջոցները տրամաբանական անհրաժեշտությամբ: Բացատրություններն, ինչպես ապում են, ավելորդ են, միայն ճիշտեցնենք, որ հայերի ցեղասպանությունը Մոսկվայից հեռավոր է 1988 թ. փետրվարի վերջին, երբ Ադրբեջանը սակավին չէր «ակնկոծում», իսկ Մասպանի, մասնաշաղկապի այլ շրջաններում խաղաղ ապրում էին բոլոր ազգերի ներկայացուցիչները, այդ թվում նաև ադրբեջանցիները:

Մտիլված ենք ախտահանելու հատաստել, որ Ադրբեջանում չգտնվեց մի քաղաքագետ, մշակույթի կամ գիտության գործիչ, որը հրապարակայնորեն դատապարտեր հայերի ցեղասպանությունը Մոսկվայից: Ավելին, առաջինը հենց ադրբեջանցի գիտնականները հայտարարեցին, որ ջարդը կազմակերպվել են իրենք՝ հայերը: Մոսկվայից ռեպրեզենտացիան ամենաթեմ պահին Հայաստանի գիտությունների ակադեմիայի նախագահ Վ. Հ. Համբարձումյանը հետագիբ է ստանում Բաբվից, որի ներքո, համաձայն հեղինակների հատատուման, ստորագրել են Ադրբեջանի ԳԱ 240 աշխատակիցներ: **«Ձեր խղճից ենք դիմում: Ոչ-իրիվ հարչության ընթացքում հայերը երրորդ անգամ երկու եղբայրական ժողովուրդների դատան ընդհարումների սկսող են հանդիսանում: Գիտե՛ք ձեր մտավորականությանը, դադարեցրե՛ք ձեր համաբարդարացիների սանձարձակությունները»**³⁵:

Ադրբեջանական հրատարակություններում Մոսկվայից հայերի կոտորածի պատասխանատվությունը ցայսօր դրվում է հայերի վրա: «Երկու տարի տևողությամբ ողբերգություն» հրատարակության մեջ, ժամանակագրական աղյուսակում սուբյեկտիվության իրադարձությունները ներկայացվում են համառոտ տողով. «27—29 փետրվարի: Ջարդ և զանգվածային անկարգություններ Մոսկվայից, որում անմիջականորեն մասնակցել են հայ ծայրահեղականները»³⁶:

Ադրբեջանը պնդում է, որ զոհվածների մեջ երկխանք չեն եղել: Այլ կարծիքի են ռուս գիտնականները. «Մենք գիտենք, որ զոհվել են և երկխանք, և կանայք»³⁷:

Մոսկվայից կոտորածի զոհերի ճշգրիտ թիվը պարզել հնարավոր չէ Ադրբեջանի ղեկավարության համագործակցելուց հրաժարվելու պատճառով: Ադրբեջանի դատախազության տրա-

մադրամ տվյալների հիման վրա ԽՍՀՄ դատախազությունը հայտարարել է, որ «Մոսկվայից զոհվել են հայ ազգության 26 քաղաքացի»³⁸:

- * 1. Ավագյան Լույս Պավելի
- 2. Ավագյան Յուրի Բագրատի
- 3. Ավանեսյան Արեթո Մանվելի
- 4. Ավանեսյան Վաղերի Մանվելի
- 5. Առաքելյան Արտաշ Լեոնի
- 6. Արամյան Արմո Աշոտի
- 7. Արամյան Արտուր Արմոյի
- 8. Ատուշանյան Վաղյանի Հովհաննեսի
- 9. Բաբայան Արշակ Ասրանի
- 10. Գրիգորյան Էմմա Շիրինի
- 11. Դանիելյան Դիմիտրի Արտեմի
- 12. Դանիելյան Մեդա Հովսեփի
- 13. Համբարձումյան Միշա Արսենի
- 14. Համբարյան Ալեքսանդր Ալեքսանդրի
- 15. Մարտիրոսյան Հարրի Արտեմի
- 16. Մելքոնյան Մուրտն Մարգարի
- 17. Մելքոնյան Ռայիսա Արսենի
- 18. Մելքոնյան Իդր Մուրտնի
- 19. Մելքոնյան Իրինա Մուրտնի
- 20. Մելքոնյան Էդուարդ Մուրտնի
- 21. Մելքոնյան Փիրուզ Առաքելի
- 22. Մեմետև թամար Գեղարյանի
- 23. Մովսեսովա Հերայսա Բախչիի
- 24. Սարգսյան Ծանին Գեղարյանի
- 25. Թովմասյան Ռաֆիկ Համբարձումի
- 26. Տրդատով Գաբրիել Արամի

Առկա տեղեկությունները, սակայն, լրջե հիմքեր են տալիս կապածի տակ առնելու սուբյեկտիվ կոտորածի զոհերի թվի վերաբերյալ պաշտոնական տվյալների հավաստիությունը: Այսպես, «Փետրվարի 28-ին Մոսկվայից զոհվել են 26 հայ ազգային Արամյան Ատուշանյանը, 1939 թ. ծնված, խոզովալակալանան

գործարանի բանվորների: Վերջին անգամ նրան տեսել են «Միր» փողոցում, սանձարձակություն անող ամբոխի մեջ»²⁷:

Սումգայիթում զոհվածների թվում է Ելենա Մարկոսի Բաբայանը, 1932 թ. ծնված, զոհվել է ձեռի հետևանքով: Լավիևնոի Լկարխոսի Մախարյանը, 1953 թ. ծնված, սպանվել է աշխատատեղում... «Մենք ունենք մահվան վերաբերյալ բժշկական մի քանի վկայականներ (խոսքը Սումգայիթում զոհվածների հարգատեղիին տրված վկայականների մասին է, խմբ.): Մահվան մասին բժշկական վկայականների գրանցման համարներից ուշադրություն դարձնելու պարագայում, կարգվի հետևյալը: Ամենափոքր համարը Իրինա Մելքունյանինն է՝ 73, իսկ ամենամեծը՝ Իգոր Մկերունյանինը՝ 187: Երկու վկայականն էլ տրված են 1988 թ. մարտի 5-ին: Հաշվի առնելով Խորհրդային Միության դիարաններում դիակների գրանցման ընդունված կարգը (համարների հաշվառումն սկսվում է նոր տարվա սկզբից), որշում ենք, այդ օրերին դիարաններում գրանցվել են առվվազմ 115 դիակ... Իսկ այդ քանակությամբ բնական մահերը բացառվում են նույնիսկ այն պատճառով, որ նախորդ երկու ամսվա ընթացքում գրանցվել է 72 մահից ոչ ավելի»²⁷ և:

ՀԱՅ ԲՆԱԿԿՆՈՒԹՅԱՆ ԲՈՒՆԱԳԱՂԹԸ ԱԴՐԲԵՋԱՆՍԻՑ

Ադրբեջանում Սումգայիթի հետ միասնամահ ջարդեր կազմակերպվելու փորձեր արվեցին նաև Կիրովարաղում, սակայն տեղական հայ բնակչությունն, օգտվելով բնակչության հոծությունից, կարողացավ ինքնապաշտպանություն կազմակերպել ու խուսափել կոտորածից, թեև նյութական զգալի վնասներ կրեց: Կիրովարաղում ավերվեց ու կողպուղից մի քանի տասնյակ հայկական տուն, կրակի մատնվեց մի քանի ավտոմեքենա: Տարբեր սատիմանի ծանրության վերքեր ստացան քաղաքի մի քանի արտապան:

Ադրբեջանում կատարվող իրադարձություններից մի փոքրամասն կա իշխանությունների ցուցադրական ջնջմանակը արձակում է կուլակային տարրերի ձեռքերը, և 1988 թ. ամռան մտ իսկա-

նակական հիստերիան այդ հանրապետությունում նորից է սկսում ծավալվել: Բազմաթիվ ու բազմամարդ հանրամարտները հարվում ու Ադրբեջանի այլ քաղաքներում, որ սկսվել էին հանրապետության բնապաշտպանական մաքրության պատերազմի, շուտով նորից տեղափոխվեցին ազգայնամոլական գծերի վրա՝ «Մահ հայերին», «Հայեր, դժուրս Ադրբեջանից» ծանուր կարգախոսներով... Հանրահավաքներում կույրներ էին ունենում գիտության ու մշակույթի հանրապետությունում հայտնի գործիչներ:

Անհավանական է, բայց իրադրությունը նորից սրելու պաշտոնական առիթ Ադրբեջանում ընտրեցին կոպերատիվի, ինչպես նաև պանսիոնատի ու փախստականների համար տնակների շինարարությունը Լեռնային Ղարաբաղի տարածքում՝ ադրբեջանցիների կողմից Թոփխանա, հայերի կողմից Խաչին Տափ անվանյալ վայրում:

Շինարարների՝ աշխատանքներ կատարելու համար տեղական իշխանություններից թույլտվություն ստանալուց մի շարք անց Ադրբեջանում միջոցառում սկսվեց Խաչին Տափը ազգային սրբավայր դարձնելու համար: Բնագետները տեղավայրը հաստատրեցին արժեքավոր ու մնացուկային ծառատեսակներով արգելանոց, որոնց հատում է սպառնում, կենդանաբանները «նպտնաբերեցին» պատեղ «վեց թևանի», աշխարհում ոչ մի տեղ չհանդիպող թիթեռներ, պատմաբանները նշում էին Խաչին Տափի պատմական բացառիկ նշանակությունը ադրբեջանական ժողովրդի համար... Բազմում կազմակերպվեցին շուրջօրյա բողոքի հանրահավաքներ: Թե որքան էին շինձու դրանց դրդապատճառները, ցույց է տալիս ԽՍՀՄ Պետզինի և Բնուք. Պետկոմի հաստատված նախնամտողիկ եզրակացությունը, որը տեղավայրը բնութագրեց իրեն «բիթակալած արտավայր»: Խաղաղասիրական առաքելությանը տարածաշրջանում գունձող ակտիվիստ Ա. Դ. Մախարովը 1988 թ. դեկտեմբերի 25-ին այցելելով Խաչին Տափ, հանգեց նույն եզրակացությանը:

1988 թ. նոյեմբերի 21-ին Լեռնային Ղարաբաղում ԽՄԿԿ ԿԿ ներկայացուցիչ Ա. Վոլսկին կարգադրեց դադարեցնել շինարարությունը Խաչին Տափում, բայց նույն օրը Ադրբեջանում, առանց բացատրության բոլոր շրջաններում, սկսվեցին հայերի զանգվածային ջարդեր: Այդ գործողության ամենաբարձր պետական մա-

կարդակով ծրագրված լինելը հաստատում է այն փաստը, որ Նախիջևանում, Շամխորում, Մինգեչաուրում, Խանկարում, Շամախիում, Ափրովաբադում, Խոփշիում, Իսմայիլիում, Շաբլում և հանրապետության էլի հարյուրավոր բնակավայրերում հայերի ջարդերը սկսվեցին մինչև 1918 թվական, ակնհայտորեն նույն աղբյուրից բխող նրանումով: Ակտիովով, թմբադնդերով ու անարատելիությամբ արքած ջարդարարների խմբերը սկսեցին թագանել, վառել, սպանել հայերին: Հանրապետությունը սկսվեց հայերի զանգվածային, հումանիտար խռչող արևելի բնույթ ընդունած, բռնազաղթ: Ընդհանուր առմամբ մեկուկես ամսվա ընթացքում Ադրբեջանից լուծազատվեց ավելի քան 300 հազար հայ:

Մարդկության դեմ ուղղված նաև այդ հանցագործությունը, ցավոք, ադրբեջանցի մտավորականների շրջանում չդատապարտվեց, ընդհակառակը, ադրբեջանական մտավորականության առանձին ներկայացուցիչներ, այդ թվում և հոգևոր դեմքեր, ոչ միայն արդարացնում էին արվածը, այլև մամուլում հանդես եկան հայ ժողովրդի հապեհին ոչ երկիմաստ սպառնալիքներով: Հիսլանայական ծավալվող հիստորիայում ոչ անկարևոր դեր խաղաց Անդրկովկասի մուսուլմանների հոգևոր վարչության նախագահ, ադրբեջանական մտավորականների առաջնորդ Շեյխ Ուլ-Իսլամ հաջի Ալլահ-Շուքրու Փաշա գազին, որը իր հարցազրույցում հայտարարեց հետևյալը. «Մենք, ինչպես և մեր ողջ ժողովուրդը, վճռականորեն ու կտրուկ մերժում ենք թաղաբակիք աշխարհին անհարիր հարևան հանրապետության ու ճրանց արտասահմանյան հովանավորների ճիգերը՝ ձեռք բերելու պենսական տարածություն» բնիկ ադրբեջանական հողերի հաշվին: Թվում է Թուրխանան աստիճանաբար մշակված գործողություն ծրագրի գեթ մի ստանձին օղակն է՝ հետևողականորեն իրականացվող դրված նպատակներին հասնելու համար: Ամեն բան ստեման ունի, այդ թվում ժողովրդի կրկարատև համբերությունը, որի չարաշահումը կիներ հույզ անշրջահայաց»³⁸:

Ադրբեջանի որոշ շրջաններում հայազգի բաղաբայիների մի մասը գրվված է, կոչի հանրապետության ստեմաններից դուրս գալու հնարավորությունից: Խառը վերաբերում է այն մարդկանց, որոնք բուժվում էին կամ գտնվում էին հաշմանդամների ու տարեցների հասուկ տներում: Այս դժբախտ մարդկանց նակատա-

գիրը հիբալի ողբերգական եղավ: «...Խանկարի շրջանում մարտիկներ, ուղաբախների օղակները դիակներով կախաղաններ են տեսել...»³⁹:

«ԽՍՀՄ քրեական հետախուզության խումբը հաստատում է Գյանջա քաղաքի (Կիրովաբադ) Գյախագի հաշմանդամների անից 12 հայազգի անձների դուրս տանելու ու ճրանց սպանության փաստը: Կուր գետի ջրախոռոչում, Գյանջայից քսուսսուս կիրմաուր հյուսիս-արևմուտք բննչական խումբը հայտնաբերել է 12 թաղված դիակներ. 11 կին և 1 տղամարդ: Նրանց մեջ կան մեծահասակներ:

Նույն օրը, փետրվարի 14-ին ներքին գործերի գինձատուղների և քրեական հետախուզության օպերատիվ խմբի կողմից հայտնաբերվել են ևս 6 դիակ Խանկարի շրջանի Հաջիբեկո գյուղի մոտ (Կիրովաբադից 20 կմ հեռու): Դիակներն այլանդակված էին, բազմաթիվ ձակձկուոված վերքերով»⁴⁰:

Շատ ժամանակ անց, 1990 թ. ապրիլի 6-ին, ԽՍՀՄ Պետական անվտանգության կոմիտեի նախագահ Վ. Կրոյչևիով գրավոր պատասխանեց Լեոնային Գարսարդից ԽՍՀՄ ժողովրդական դեպուտատների սպանվածների անձինքի վերաբերյալ հարցապնդմանը:⁴¹

1988 թ. նոյեմբեր-դեկտեմբեր ամիսների բունագաղթի ընթացքում, ոչ լիվիվ տվյալներով, Ադրբեջանում գտնվել է 270 հայազգի խաղաղ քաղաքացի: Հատկապես շատ զոհեր են եղել շրջկենտրոններում, Խանկար, Կուսկաշին, Վարդաշին և Շամխոր, ինչպես նաև Մինգեչաուր քաղաքում: Միայն հոծ սպորդ հայ բնակչության խռչող զանգվածի առկայությունը Ափրովաբադում օգնեց

- * 1. Ադրբեջանի Վարդուջ Եստուրի, 1926 թ. ձմեռված զոհերի մասին:
2. Հարությունյան Արթիկ Հարապետի, 1927 թ. ձմեռված,
3. Բարսեղյան Ռուզա Վանանի, 1917 թ. ձմեռված,
4. Գաբրիելյան Ռուզա Միքայելի, 1940 թ. ձմեռված,
5. Գրիգորյան Ռուզա Արևի, 1948 թ. ձմեռված,
6. Գույանովա Սիրանուշ Ստամբաի, 1920 թ. ձմեռված,
7. Գանիշյան Սվետլանա Հայի, 1940 թ. ձմեռված,
8. Լակոնիկան Սվետլանա Արսենայի, 1940 թ. ձմեռված,
9. Մանվելյան Վարդառա Արսենի, 1915 թ. ձմեռված,
10. Սարկիսյան Թամարա Արսենի, 1945 թ. ձմեռված,
11. Խաչատուրյան Արտավազ Մարտիրոսի, 1930 թ. ձմեռված,
12. Խաչատուրյան Եղիշենա Միքայելի, 1944 թ. ձմեռված:

ինքնապաշտպանություն կազմակերպելու և խուսափելու կատարվածից, բայց քաղաքի անկախային դիրքը չէր նպաստում երկարատև դիմադրությանը, և հայերը հարկադրված էին թողնելու քաղաքը:

Արդեն 1988 թ. Ադրբեջանի շատ շրջաններում, այդ թվում՝ բնիկ հայկական Շամխորի, Ղազախի, Գետաբեկի, Գաչքեսանի շրջաններում ու Նախիջևանի Ինքնավար Հանրապետությունում չէր մնացել ոչ մի հայազգի բնակիչ: Հայ բնակչությունը մասամբ մնացել էր միայն այն շրջաններում, ուր հաջողվել էր ինքնապաշտպանություն կազմակերպել, Խանդաբլի շրջանի Ռինգ գյուղերում, Բաքվում, Կիրովաբադում, ինչպես նաև Շամախյանի շրջանում լրիվ: Հետագայում Ադրբեջանը շարունակում է մեթոդաբար, պատմիչ մարտիների օգուտադրմամբ, հայ բնակչության բռնի արտաքսումը հանրապետությունից: 1989 թ. ավարտվեց հայերի բռնազատելու կիրովաբադից, ուր 1988 թ. սկզբին բնակվում էր ավելի քան 45 հազար հայ, 1990 թ. Բաքվից (1988 թ. սկզբին Ադրբեջանի մայրաքաղաքում բնակվում էր մոտավորապես 240 հազար հայ), 1991 թ. բռնի տեղահանվեց Խանկարի շրջանի հայ բնակչության մինչև այդ պինտը մնացած մասը, թվով 5 հազար մարդ (1988 թ. փետրվարին շրջանում ապրում էր շուրջ 12 հազար հայ):

1988—90 թթ. ժամանակամիջոցում Ադրբեջանից բռնի տեղահանվել է 370 հազարից ավելի հայազգի բնակիչ⁴¹: Հայ բնակչությունը Ադրբեջանում թողել է 92 հազարից ավելի տուն ու բնակարան: Հատկանշական է, որ Ադրբեջանական Հանրապետության Միևնաբերի խորհրդի 1988 թ. մայիսի 6-ի հ. 205 որոշման մեջ ասվում է. «**Ընթացիկ տարվա սկզբին, հունվարի սկզբի դրությամբ, հանրապետություն է տեղափոխվել փաստորեն Հայաստանի բնակչության ողջ ադրբեջանցի մասը (135 հազար մարդ)**»⁴², Դա նշանակում է, որ Ադրբեջանը հարկադրաբար տեղափոխվածների բնակեցման հարցում դժվարություններ չէր կրում: Յուրաքանչյուր ադրբեջանական ընտանիքին քամին էր ընկնում մոտ երեք «ազատված» հայկական տուն ու բնակարան:

Հայաստանի կառավարության համար, այդպիսով, փախչումակցների բնակեցումը ավելի ծանր խնդիր եղավ, քան Ադրբեջանի համար: 1988 թ. Հայաստանի հյուսիսային շրջաններում սղոտալի երկրաշարժ եղավ, որի հետևանքով զոհվեց ավելի քան 25 հազար և անօթևան մնաց շուրջ 500 հազար մարդ: Նկատի պետ է ունենալ, որ ոչ քիչ թվով փախստականներ հայտնրկվեցին Հայաստանում Թուրքմենստանից, Աբխազիայից, Չեչենիայից և Հարավային Օսեթիայից:

Այ պակաս ծանր կացության մեջ հայտնվեց Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը, որը փախստականներ էր ընդունել Ադրբեջանից (31 հազար մարդ), Թուրքմենստանից (1000 մարդ), իր բնակչության ընդամենը թվի մոտ 18%: Ադրբեջանի սարևոյալի հետևանքով Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում ավելվել էր բնակֆոնդի մինչև 45% և բռնի տեղահանվել մոտ 50 հազար մարդ:

Հարկադրաբար նորից ենթ հաստատում, որ մինչև 1988 թ. իրադարձությունները միայն Բաքվում ու Կիրովաբադում բնակվում էին համապատասխանաբար 240 և 45 հազար հայ և նրանց ամենք ամբողջովին բնակեցված են ադրբեջանցիներով: Մեծք չեն բացատրում Ադրբեջանի ֆինանսական ու իրավապահ վերամիասակի կողմից լավագույն տները զբաղեցնելու հնարավորությունը, սակայն այդպիսի տների տոկոսը չի կարող դուրյգ-ինչ կլանակալից դեր խաղալ փախստականների բնակեցման հարցում:

Արտոնիշալից ելնելով, պարզ է դառնում, որ միլիոնավոր չլինակեցված, վրանային ճամբարներում ապրող փախստականների թեմայով շամարկումը ունի զուտ քաղաքական ենթահիմատ: Ադրբեջանի դեկալարությունը դիտավորյալ մոլորության մեջ է գցում համաշխարհային հանրությանը, իբրև փախստականների օրկալացնելով երկրի ներսում հարկադրաբար տեղափոխվածների: Անտարակույս, այդ մարդկանց վիճակը արժանի է կարեկցանքի, նշուս պնդման, ինչպես ոչ կամովին տեղափոխվածների: ԼՂՀ-ում, որոնց թվով հասնում է 30 հազար մարդու: Սակայն դա չի կարող հիմնադրորտ ծառայել նրանց փախստականների կրոյք դատելու համար:

Հատ 1989 թ. մարդահամարի, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կողմից այժմ վերանակվող տարածքներում բնակվել է 350 հազարից պակաս մարդ⁶³: Եթե նույնիսկ դրան ավելացնենք իսկական փախուսականներին (Հայաստանը թողած 135 հազար ադրբեջանցիներին և 38 հազար լուրթ-մեսխիներին ուղղակիորեն), այս դեպքում էլ նրանք կարող էին տեղավորվել նաեւ Ադրբեջանում թողած տներում: Առավել ևս, որ 1989 թ. Հայաստանի կառավարությունը Ադրբեջանին 110 միլիոն դոլարի չափով նպաստ է տվել⁶⁴: Հայաստանը թողած 168 հազարից 144 հազար ադրբեջանցիներ օրենքով ընդունված կարգով փոխանակել են բնակարանները, և նպաստը նախատեսվել էր ադրբեջանցիների այն խմբի համար, որը չի կորստաբերվել փոխանակելի բնակարանը:

Այսպիսով կարելի է հաստատել, որ ադրբեջանցի «փախըսականների վրեժակին ճամբարները» զուտ գովազդային նարայիկ խաղ է համաշխարհային ընկերակցությունից մարդափրական օգնություն ստանալու հաշվարկով: Միայն ԱՄՆ-ը, որի կոնգրեսի որոշումն արգելում է Ադրբեջանին մարդափրական օգնություն ցուցաբերել Հայաստանի ու Լեռնային Ղարաբաղի շրջափակման պատճառով, բարեգործական կազմակերպությունների միջոցով Բաքվի իշխանություններին ամեն տարի փախըսականների բնակեցման համար 100 միլիոն դոլարի հասնող օգնություն է ցույց տալիս: Ինչի վրա և ինչպես են ծախսվում Ադրբեջանի տնտեսության հաստատուն բազմամիլիոն դոլարային ներարկումները, դա կարելի է միայն գուշակել, ոչ չէ որ միայն, որ նախանշի ժամանակ ադրբեջանցի զինվորները խրամատներում թաղվեցա թողել են «նոստալիտար պահածոներ», «վաճառքի ենթակա չեն» մակագրությամբ:

Վիթխարի հումանիտար աղետը, որ վրա հասավ Ադրբեջանին ու երկու նակական պետություններին, Բաքվի իշխանությունների համար դարձավ հանրապետությունը հարստացնելու կամ պետական գործիչների համար անձնական եկամտի սուլլություն: Փախուսականների «Անզանգ» կազմակերպությունում պահպանված թագմարիով փաստաթղթերը դրա վկայությունն են

և ցույց են տալիս Կիրովաբադի հայ բնակչության բռնագաղթի ժամանակ տեղ գտած կողոպուտները:

Ուշագրավ է այն, որ, համաձայն ԽՍՀՄ օրենքների ու ԽՍՀՄ Պետական արարովագրական վարչության կառուցադրության կողմարտի ենթարկված առժամներին դրանական փոխհատուցում տրվում է միայն իրավասու մարմինների կողմից կողոպտման փաստը հաստատելու դեպքում: Եվ նորից փախուսականների «Անզանգ» կազմակերպության շնորհիվ մեր տրամադրության տակ կան «չիրավասու» մարմինների կողմից Ադրբեջանում հայազգի քաղաքացիների բնակարանների զանգվածային կողոպուտը հաստատող թագմարիով փաստաթղթեր»:

Ադրբեջանի ղեկավարությունը, սակայն, ոչ միայն չհատուցեց քաղաքացիների վնասը, որոնց բնակարանները ենթարկվել են ջարդի, այլև պետական մակարդակով օգնեց կողոպուտի հայազգի քաղաքացիներին: Տեղական խորհուրդների գործադիր կոմիտեները օգնել են ադրբեջանցի ազդույթյան քաղաքացիներին նկատելալից բնակարանների կեղծ փոխանակումներ: Արդեն

* СПРАВКА

Выдана тов. Шахназария Валерии Владимировичу в том, что его квартира по адресу: г. Кировабад, ул. Ф. Алиева, зд. 5, кв. 13 была погромлена 23 ноября 1988 года группой лиц азербайджанской национальности, имущество, находившееся в квартире, полностью уничтожено.

Следователь следственной группы Прокуратуры СССР

Пелени Н. В.

** СПРАВКА

Выдана гр. Гавалян Александр Шаваршишине, 1939 года рождения, в том, что 24 ноября 1988 года в ее квартире по адресу: г. Кировабад, пр-кт Ленина, зд. 23, кв. 35 хулиганствующими лицами азербайджанской национальности был учинен погром, в ходе которого часть имущества была похищена, часть уничтожена - сожжена. В том числе были уничтожены документы, метрики детей, аттестат об окончании ГПТУ Гавалян Карен Гариновича-сына потерпевшей, диплом об окончании училища связи на имя Гавалян А. Ш.

По данному факту возбуждено уголовное дело № 16/87141-89 и ведется расследование следственной группой Прокуратуры СССР.

Следователь следственной группы Прокуратуры СССР

Н. В. Смирнова

Հայաստանում փախստական ԱճՆԱ Ֆարպայնը իմացել է, որ իր տունը փոխանակվել է շփոխանակվող գերատեսչական բնակարանի նետ*:

Ադրբեջանի հալազգի քաղաքացիներին չվերադարձվեցին նաև կրուպերտով բնակարանների շինարարության համար հախորթ մուծված գումարները**:

Հալազգի քաղաքացիների հանդեպ Ադրբեջանի իշխանությունների նման վերաբերմունքը սխալվել է հանրապետությունում ամենուր: Ավելին, ինչպես երևում է մեր տրամադրության ներքո գտնվող բազմաթիվ փաստաթղթերից, շատ տեղերում հայերին

* СПРАВКА

Дана настоящая т. Бабаан Аине Геворковне в том, что гр. Джафаров Имамала Джафар-оглы проживал в не подлежащей обмену ведомственной квартире Мегринского шезвавода.

06. 04. 1989

Директор Мегринского шезвавода

Селямян Н. З.

**

Գր. Առաքիլյան Ա. Ա.
Армянская ССР 377450, пос. Аваран
пансионат «Орбита»
Копил: Прокуратура
Насиминского района
на ваш №1748—ж—90 от 03.09.90 г.

Ваше заявление по вопросу о возврате павшего взноса в сумме 4123 рубля рассмотрено.

Председатель ЖСК «БГИ-69» Э. Мамедов в своем объяснительном указывает, что вы свою квартиру в най передал на основании п. 6 постановления Совета Министров Азербайджанской ССР за № 224 от 12.07. 1988 года и п. 14. Примерных правил учета граждан железнодорожников вступить в члены жилищного или жилищно-строительного кооператива в Азербайджанской ССР утвержденным постановлением Совета Министров республики от 17. 04. 1989 года, № 177, поэтому, Ваша обращения по данному вопросу несостоятельны.

Начальник отдела организации

Управления ЖКХ БГИ

Исп. Ч. Абышов

Гусейнов Х. С.

մարկադրել են վճարել Հայաստանի Հանրապետություն տեղափոխելու համար: Վճարովի բռնագաղթ: Մասնավորաբար այսպես են վարվել Վարդաշենի ու Կոտակաշենի փախստականների նետ:

Ջարդերի ընթացքում իրենց անձը հաստատող փաստաթղթերը կորցրած քաղաքացիները փոխարինող տեղեկանքներ կարող էին ստանալ այն դեպքում միայն, եթե թողնում են Ադրբեջանը: ԽՍՀՄ դատախազության քննչական մարմինները, մագաչախ անգամ չտոմսագրվելով տուժածների նախատարով, որոնց հայցադիմումները նրանք քննարկում էին, առանց երկնուկու, բնակավայրը թողնելու նրանց համաձայնությունը հաստատող տեղեկանքներ էին տալիս*:

Ադրբեջանը իրականացնում էր ոչ միայն հանրապետության բնիկ բնակչության բռնագաղթը, այլև ձեռք էր բերում զգալի միջոցներ: Հողերը, խնայողամարկիզների անճնական ավանդները, սննդը, տնային ունեցվածքը, մշակված այգիներն ու բանջարահոցները, տեխնիկան, կենդանիները... Ջարմանալի չէ, որ այն ժամանակ տակալին ԽՍՀՄ-ի կազմում գտնվող Ադրբեջանը ձեռքստում էր որքան հնարավոր է շուտ ազատվել տուժածներից, ակա՛նատեսներից ու բազմաթիվ մարդկանցից, որոնք հետամուտ էին եթե ոչ արդարության, ապա զոնե ջարդերի հետևանքով կրած վնասների փոխհատուցման:

* СПРАВКА

Одес внутренних дел Дана Осипова Джема Владимировне 1954 г. исполнительного ко- рождения, проживавшей по адресу поселок митета Ганджинского Гяндистан дом 10, кв. 13, в том что 23 ноября 1988 года неизвестные лица разгромили ее квар- ронных депутатов тирю, при этом были уничтожены документы г. Кировабада удостоверения ее личности, а также документы № 0—88 3.12—1988 г. удостоверения личности ее детей.

Дети: Осипова Диана Александровна 1978 года рожд.

Осипова Нара Александровна 1975 года рожд.

Справка дана для выезда из города Кировабада.

Следователь следственной бригады прокуратуры СССР.

ПЕЧАТЬ

подпись

(ШИШКО И. Л.)

3. 12. 1988 г.

ՈՂԲԵՐԳՈՒԹՅՈՒՆԸ ԲԱՔՎՈՒՄ

